ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/10

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Սենտրալ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Զաքարյանի (պետական գրանցման համար՝ 271.110.912925)

«Սենտրալ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Ա. Պարանյանի (լիազորագիր՝ տրված 26.01.2022թ.)

քննելով ՀՀ ոստիկանության կարիքների համար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022/ԱՎ/Ա-42» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից 21.01.2022թ. ներկայացված (24.01.2022թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/10 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Սենտրալ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 21.01.2022թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«*Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը*

ՀՀ ԿԱ ոստիկանության կարիքների համար՝ ավտոմեքենաների պահեստամասերին ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ԱՎ/Ա-42» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սենտրալ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը թերի է և որոշվել է տրամադրվել 1 աշխատանքային օր անհամապատասխանությունների շտկման համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա էին անհամապատասխանություններ:

07.01.2022թ. մասնակիցներին տրվել է մեկ /1/ աշխատանքային օր անհամապատասխանությունների շտկման համար: «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից չի կատարվել անհամապատասխանությունների շտկում:

Արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

ՀՀ ԿԱ ոստիկանության կարիքների համար՝ ավտոմեքենաների պահեստամասերին ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ԱՎ/Ա-42» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սենտրալ» ՍՊԸ-ն:

Ինչպես արդեն հայտնել ենք, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը թերի է և որոշվել է տրամադրվել 1 աշխատանքային օր անհամապատասխանությունների շտկման համար:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա էին անհամապատասխանություններ:

07.01.2022թ. մասնակիցներին տրվել է մեկ /1/ աշխատանքային օր անհամապատասխանությունների շտկման համար: «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից չի կատարվել անհամապատասխանությունների շտկում:

Արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Գտնում ենք, որ ՀՀ ԿԱ ոստիկանության կարիքների համար հայտարարված «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ԱՎ/Ա-42» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հանձնաժողովը խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, մասնավորապես՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն արձանագրվել է՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը թերի է և որոշվել է տրամադրվել 1 աշխատանքային օր անհամապատասխանությունների շտկման համար: Այսինքն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 2 արձանագրությամբ վերացական նշում է կատարել, որ Ընկերության կողմից ներկայացված հայտում կան անհամապատասխանություններ, սակայն չի մանրամասնել, թե ինչով այն չի համապատասխանում Հրավերի պահանջներին:

Ավելին շտկման վերաբերյալ որևէ ծանուցում չի ստացվել Ընկերության էլ. փոստի հասցեին, որի պարագայում կարելի է փաստել, որ եթե գնահատող հանձնաժողովի կողմից աճուրդի համակարգի միջոցով ներկայացվել է շտկման ծանուցում, ապա այն ավտոմատ կերպով պետք է ստացվեր նաև Ընկերությանը պատկանող էլ. փոստին:

Արդյունքում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը:

Բացի այդ, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք ցանկանում հրավիրել հետևյալի վրա՝

Այսպիսով, ցանկանում ենք փաստել, որ Ընթացակարգի քարտուղարի կողմից որևէ շտկման ծանուցում չի ուղարկվել «Սենտրալ» ՍՊԸ-ին:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ՝

Պարտավորեցնել «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ԱՎ/Ա-42» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 19.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ ընդունած որոշումները:

Պարտավորեցնել «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ԱՎ/Ա-42» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին դադարեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Պարտավորեցնել «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ԱՎ/Ա-42» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին կրկին ծանուցել «Սենտրալ» ՍՊԸ-ին շտկելու վերաբերյալ /մանրամասն նկարագրելով, թե ինչը պետք է շտկվի/»:

Ի լրումն բողոքի Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Ինչպես արդեն հայտնել ենք, «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ԱՎ/Ա-42» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝

«Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը թերի է և որոշվել է տրամադրվել 1 աշխատանքային օր անհամապատասխանությունների շտկման համար:

12.01.2022թ. մասնակիցներին տրվել է մեկ /1/ աշխատանքային օր անհամապատասխանությունների շտկման համար, սակայն նույն գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված որոշմամբ՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից չի կատարվել անհամապատասխանությունների շտկում:

Արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Արդեն հայտնել էինք, որ շտկման վերաբերյալ որևէ ծանուցում չի ստացվել Ընկերության էլ. փոստի հասցեին, որի պարագայում կարելի է փաստել, որ եթե գնահատող հանձնաժողովի կողմից աճուրդի համակարգի միջոցով ներկայացվել է շտկման ծանուցում, ապա այն ավտոմատ կերպով պետք է ստացվեր նաև Ընկերությանը պատկանող էլ. փոստին:

Համակարգում մեր կողմից արված ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ 12.01.2022թ. ժամը 16:51 թվագրված ծանուցման մեջ գրվել է հետևյալը՝մասնակցության ձեր Դիմում-հայտարարության մեջ նկատվել են թերություններ՝ ձեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը թերի է և ձեզ տրվում է 1 աշխատանքային օր անհամապատասխանությունների շտկման համար .../կցվում է/:

Իսկ արդեն 19.01.2022թ. ծանուցմամբ՝ գնահատող հանձնաժողովը մանրամասն ներկայացրել է թե ինչ անհամապատասխանություն է արձանագրվել գնահատող հանձնաժողովից և արդյունքում մասնակցի կողմից շտկում չկատարելու հիմքով որոշում կայացրել մերժել վերջինիս հայտը:

Ի մի բերելով վերը նշված փաստերն ու փաստական հանգամանքները, ուսումնասիրելով «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը, պարզ է դառնում, որ հրավերի նկատմամբ կոնկրետ անհամապատասխանություն ընդհանրապես չի արձանագրվել, այլ ընդամենը վերացական նշվել է, որ Դիմում-հայտարարության մեջ նկատվել են թերություններ՝ ձեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը թերի է:

Սակայն թե ինչ՞ թերություն է արձանագրվել, կամ որ պարամետրերը չեն համապատասխանում հրավերի կոնկրետ որ պահաջներին, մնում է անորոշ: Արդյունքում հայտը մերժելու մասին որոշումը անորոշ է, չհստակեցրած և վերացական, և այն չի

բավարարում Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասին 8-րդ կետի, ինչպես նաև Կարգի 29-րդ և 46-րդ կետերի պահանջներին:

Վերոհիշյալի արդյունքում անկհայտորեն խախտվել է նաև իրավական որոշակիության և կանխատեսելիության սահմանադրական սկզբունքները (այդ մասին ավելի մանրամասն՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 18.04.2006թ. թիվ ՍԴՈ-630, 15.01.2008թ. թիվ ՍԴՈ-723 և 29.01.2008թ. թիվ ՍԴՈ-731 որոշումները):

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը բավարարել»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.01.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենն ապահովել է իր և ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը:

2. <u>ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ՀՀ ոստիկանության ուղղված 24.01.2022թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/1267-2022 գրությամբ Օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա պահանջ է ներկայացրել սույն բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալու օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրելու վերաբերյալ:

Պատվիրատուի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ որոշում կայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթեր չեն ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.01.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2022/10 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2022/10 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության կարիքների համար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022/ԱՎ/Ա-42» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Սենտրալ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը թերի է ներկայացված: Տեխնիկական բնութագրում հստակեցված չէ ավտոմեքենաների պահեստամասերի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով 12.01.2022թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունների շտկում չի կատարվել և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Սենտրալ ՍՊԸ-ի 21.01.2022թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված

տարբերակը: ***Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ: Ընդ որում, ***հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը:***

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.11-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: ***Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:***

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Այսպես, ՀՀ ոստիկանության կարիքների համար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022/ԱՎ/Ա-42» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Սենտրալ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը թերի է ներկայացված: Տեխնիկական բնութագրում հստակեցված չէ ավտոմեքենաների պահեստամասերի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով 12.01.2022թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունների շտկում չի կատարվել և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված eauction.armeps.am համակարգի միջոցով 12.01.2022թ. վերջինիս ուղարկված ծանուցման արտատպման ուսումնասիրության արդյունքում հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Ընկերությանը 12.01.2022թ. ժամը 16:31-ին ուղարկվել է «դիմում հայտում շտկում կատարելու մասին» վերնագրով ծանուցում հետևյալ բովանդակությամբ.

«Հարգելի Սենտրալ ՍՊԸ,

Դուք դիմել եք ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ԱՎ/Ա-42 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին, էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է էլեկտրոնային աճուրդի մասնակցության Ձեր դիմում-հայտարարությունը, որում նկատվել են հետևյալ թերությունները. Հարգելի մասնակից Ձեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը թերի է: Ձեզ տրվում է 1 աշխատանքային օր անհամապատասխանությունների շտկման համար: Առաջարկում ենք գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունները և ուղղված դիմում-հայտարարությունը ուղարկել համակարգի միջոցով»:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ</u>՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: <u>Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>***

Ընդ որում՝ Կարգի 43-րդ կետով սահմանվում է, որ հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի ***<u>արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը</u>***:

Վերոգրյալ իրավական նորմերի մեկնաբանման և սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չեն պահպանվել Կարգի 41-րդ և 43-րդ կետերով սահմանված իմպերատիվ պահանջները, ինչպես նաև իր իսկ կողմից կազմված հրավերով

սահմանված պահանջները, այն է՝ ***մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները***, այսինքն՝ գնահատող հանձնաժողովը «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտի գնահատման ընթացքում արձանագրել է անհամապատասխանություններ, սակայն Ընկերությանն ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն չի նկարագրվել հայտնաբերված անհամապատասխանությունները, որպիսի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում, Ընկերությունը զրկվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավունքները լիարժեք իրացնելու հնարավորությունից:

Վերոնշյալ իրավական կարգավորումների և փաստական հանգամանքների հիման վրա գտնում եմ, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից 21.01.2022թ. ներկայացված բողոքը բավարարել՝ պարտավորեցնել «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022/ԱՎ/Ա-42» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտի մասով՝

1. դադարեցնել 19.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ ընդունած որոշումները:

2. որոշման հիմնավորման շրջանակներում կրկին ծանուցել «Սենտրալ» ՍՊԸ-ին արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ՝ մանրամասն նկարագրելով հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**